

ՀԱՅԱՍՏԱՆԱԿՅԹ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ՍՈՒՐԵ ԵԿԵՂԵՅՈՒ
ՅՈՒԹ ԽՈՐՀՈՒՐԴԱԵՐՈՒ



ԹՃՅԵՆՆԱԿԱՆ ԿԱՆՈՆ ԱՌՔԵԼԱԿԱՆ
ՍՈՒՐԵ ԵԿԵՂԵՅՈՒ ՅՈՒԹ ԽՈՐՀՈՒՐԴԱԵՐՈՒ
ՓՅՈՒՆ 2003 ՎԱՐՎԱՐԻ 24 - 2003

Մ Կ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Քահանան (երիցս) հարցնում է կնքահորը. «Այս երախան ի՞նչ է ցանկանում»:

Կնքահայրը (երիցս) պատասխանում է. «Յավատք, հույս, սեր և մկրտություն: Մկրտվել և արդարանալ, սրբվել մեղքերից, ազատվել դևերից և ծառայել Աստծուն»:

(Մաշտոց, Կանոն սո-րբ Մկրտո-թյան)

Կյանքում շատերս կարևորում ենք մեր ծննդյան օրը և հաճախ մեծ շուքով տոնում: Իսկ եթե նույնիսկ կարևորություն չենք տալիս այդ իրադարձությանը, միևնույն է, ժամանակ առ ժամանակ առիթ ենք ունենում մտածելու մեր աշխարհ զալու մասին: Աշխարհ զալու գեղեցիկ սկիզբը, որ ազդարարվում է մանկան ճիչով, իր մեջ մեծ խորհուրդներ է պարունակում: Այդպիսի մի մեծագույն խորհուրդ է մեր հոգևոր ծնունդը, որը կոչում ենք մկրտություն:

Մ Կ Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Խ Ո Ր Հ Ր Գ Ի Հ Ա Ս Տ Ա Տ Ո Ւ Մ Ը

Մկրտության օրինակը տվել է Ինքը Քրիստոս: Հիսուսի մկրտությունը մի բարձրագույն ճանապարհ է, որը մեզ պարտավորեցնում է սրբազան երկյուղով մոտենալ այդ վեհ խորհուրդին: Քրիստոս, Հորդանան գետի մեջ մկրտվելով, օրհնեց ջուրը, իսկ Նիկողեմոսի միջոցով էլ հայտնեց մեզ, որ եթե չծնվենք ջուրով և ջրից, չենք կարող Աստծու արքայություն մտնել (Հովհ. Գ 5): Տերը մի ժամանակ ջրհեղեղով պատժեց մարդկությանը, իսկ այժմ նույն ջրով նոր կյանք է պարգևում:

Մկրտությամբ մարդը նորոգվում է, վերածնվում և մաքրվում աբամական (սկզբնական) մեղքից: Այն մեղքից, որն առաջացավ Ադամի անհնազանդության պատճառով, և որին ժառանգորդ դարձավ ամբողջ մարդկությունը:

Աստծու պատվիրանի նկատմամբ անհնազանդուելությունը պատճառ եղավ, որպեսզի Ադամը զրկվի դրախտային կյանքից՝ իր շնորհական վիճակից, դառնա մահկանացու և դատապարտվի Դրախտից դուրս ապրելու և սեփական քրտինքով հանապազօրյա հասցը վաստակելու: Այդ անհնազանդուելությունը պատնեջ առաջացրեց մարդու և Աստծու միջև, ինչպես նաև հոգու և մարմնի, որով և մարդու բնու- թյունը շնորհագրկվեց:

Մարդուն այս անկյալ վիճակից բարձրացնելու համար Աստված Ինքը ձեռք մեկնեց Իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի միջոցով: Քրիստոս Իր մարդեղությունը, քարոզությունը, քավչական մահով, հարությունացումը և մկրտությունը սուրբ խորհրդի միջոցով մարդուն ազատեց աղամական մեղքից: Հիսուս ասաց. «Ով հավատա & մկրտվի, պիտի փրկվի, & ով չհավատա, պիտի դատապարտվի» (Մարկ. ԺԳ 16):

Հետևաբար ոչ միայն անհրաժեշտ է մկրտվել, այլև կարելի է հասկանալ, թե ինչ է նշանակում մկրտություն:

Ի՞ՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՀԻՆ

Մկրտությունը մարդը դառնում է Աստծու որդեգիր և անդամ Քրիստոսի Եկեղեցու: Մաքրվելով սկզբնական մեղքից և ծնվելով հոգևոր ծննդյամբ՝ նա դառնում է Երկնքի Արքայության ժառանգորդ՝ վերստին ստանալով աստվածա- յին այն պատկերը, որ ուներ Դրախտում մինչ մեղսագործությունը: Մկրտությունը մեռնում է հին մարդը, և ծնվում նորը: Այդ պատճառով էլ մկրտված մարդը պետք է հեռանա իր կյանքի նախկին անհավատ ընթացքից և քայլի աստ- վածային արդարություն ու ճշմարտություն ճանապարհով:

Ի՞ՆՉ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԿՐՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Մկրտության համար նախ պետք է հավատք ունենալ:

Հրաժարվել չարից ու նրա բոլոր գործերից: Պետք է գիտե- նալ հավատքի դավանությունը: Ունենալ համապատասխան գիտելիքներ քրիստոնեություն և Եկեղեցու վերաբերյալ: Այսինքն՝ մկրտվելուց առաջ պետք է անցնել որոշակի նախապատրաստական շրջան: Եվ ամենից առաջ պետք է հավատալ Սուրբ Երրորդությունը, քանի որ Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով ենք մկրտվում, ինչպես և Քրիստոս պատվիրեց իր առաքյալներին:

«Ինձ է տրված ամեն իշխանություն երկրում & երկրի վրա. ինչպես Հայրն ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղարկում: Գնացե՛ք ուրեմն, աշակերտ դարձրե՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցե՛ք Հոր, Որդու & Սուրբ Հոգու անունով: Սովորեցրե՛ք նրանց պահել այն բոլորը, ինչ որ ձեզ պատվիրե- ցի: Եվ ահա ես ձեզ հետ եմ բոլոր օրերում, մինչև աշխարհի վախճանը» (Մատթ. ԻԸ 18-20):

Մարդիկ հաճախ հարց են տալիս. «Եթե հավատքը կարե- վոր նախապայման է, ուրեմն ինչո՞ւ է կատարվում մանկանց մկրտությունը»:

Ակնհայտ է, որ մենք չգիտենք մեր վախճանի օրը, սա- կայն պարտավոր ենք այդ օրը դիմավորելու Աստծուն որ- դեգիր դարձած և Աստծու ինամքին հանձնված, քանի որ մկրտություն չունենալով ո՛չ միայն մարդկային հոգածությունը ենք կյանքի փորձություններին դիմակայում, այլև աստ- վածային խնամատարությունը՝ ունենալով մեր պահապան հրեշտակը, որն Աստծու առջև մեր բարեխոսն է: Այսու պետք է մկրտվող երեխան ունենա իր կնքահայրը: Վեր- ջինս էլ պարտավոր է լինել մկրտված և ունենալ հոգևոր գիտելիքներ որոշակի պաշար, որպեսզի Աստծու պատվի- րանների համաձայն դաստիարակի փոքրիկին:

Երբեմն մարդիկ ասում են, որ իրենք մկրտվելիս չեն զգացել, թե ինչ է կատարվել, չեն զգացել, որ այդ մկրտու- թյամբ իրենք դարձել են Աստծու որդեգիր, և ընդհանրա-
4

պես մկրտութեան խորհուրդը կատարվելիս չեն գիտակցել Աստծու ներկայութիւնը: Սակայն մարդն ավելի շուտ պիտի մտածի, որ ոչ թե Աստված է, որ ներկա չի գտնվել այդ խորհրդի ժամանակ, այլ մարդն է, որ իր տկար հոգեվիճակի մեջ չի զգացել Աստծու ներկայութիւնը: Եկեղեցին իր վարդապետութեամբ հաստատում է, որ ամեն մի խորհուրդ կատարվում է Քրիստոսի ձեռքով և օրհնութեամբ է լցնում այն ընդունողներին՝ անկախ խորհրդակատար անձից, ինչպես նաև անկախ ընդունողից: Քրիստոսի Եկեղեցին միշտ էլ աշխատել է, որպեսզի խորհրդակատարման երկու կողմերն էլ բավարար պատրաստութիւնն ունենան՝ այն մատուցելու և ընդունելու:

Ուստի հավատա՛, որ եթե մկրտվես, Աստված քեզ պիտի օրհնի, իսկ եթե մկրտված ես, ուրեմն աշխատի՛ր սրբութեամբ պահել շնորհաբաշխ մկրտութեան սուրբ խորհրդի պարզձևերը, այլապես գանձ ունենալն ու անտեսելն առավել վտանգավոր է, քան ընդհանրապես չունենալը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Մկրտութեան խորհրդի կատարման համար Եկեղեցին կարևորում է հետևյալ անհրաժեշտ հանգամանքները.

1. Միշտ հիշի՛ր, որ մկրտութեան սուրբ խորհուրդը հաստատել է մեր Փրկիչը՝ Հիսուս Քրիստոս, անձամբ մկրտվելով սուրբ Հովհաննես Մկրտչի կողմից Հորդանան գետում:
2. Մկրտութեամբ մարդը մաքրվում է աղամական մեղքից: Մկրտութիւնն ընդունող երախտան (այսպես են կոչում չմկրտվածին) դառնում է Աստծու որդեգիր: Նա արդեն Քրիստոսին իր անձի վրա կրում է որպես աներևույթ և զորավոր մի զգեստ:
3. Մկրտութիւնը պետք չէ դիտել որպես ազգային սովորութիւն կամ էլ զվարճութեան ու կերուխումի առիթ,

այլ պետք է առաջին հերթին լրջորեն պատրաստվել այն ընդունելու համար:

4. Մկրտութեան վայրը Եկեղեցին է և միայն բացառիկ դեպքերում այն կարելի է տանը կատարել:

5. Մկրտութեան նյութը ջուրն է, անկախ իր տեսակից (աղբյուրի, գետի թե ծովի) և որակից (պղտոր թե հստակ):

6. Մկրտութեան ժամանակ մանուկ երախտան հանուն Սուրբ Երրորդութեան երեք անգամ ընկրմվում է ջրով լի ավազանի մեջ՝ խորհրդանշելով Քրիստոսի մահը, թաղումը և հարութիւնը, որով մասնակից է դառնում Քրիստոսի կյանքին: Մեծահասակների դեպքում ընկրման փոխարեն պարզապես երեսի վացում է տեղի ունենում: Հետևաբար ճիշտ կլինի, եթե մկրտվողը մաքուր լինի աշխարհային քառքներից և դիմափոշիներից:

7. Մկրտութիւնից առաջ կնքահայր ենք ընտրում: Հաճախ, չկարևորելով կնքահոր պարագան, ընտրում ենք պատահական մեկին՝ լրացնելով ծեսի միայն ձևական կողմը: Սակայն խրախուսելի է, որպեսզի կնքահայրն այնպիսի մեկը լինի, որն իր քրիստոնեական գիտելիքների հմտութեամբ կարողանա ուղեցույց լինել մեզ: Կնքահայրը անպատճառ պետք է լինի մկրտված և հավատացյալ անձ:

8. Եթե մարդը գիտակցական տարիքում է մկրտվում, ապա պետք է հոգևոր լուրջ պատրաստութեան շրջան անցնի: Իսկ մանուկը այդ շրջանը պետք է անցնի իր աճմանը զուգընթաց՝ կնքահոր ու ծնողների աջակցութեամբ:

9. Մկրտութեան խորհրդակատար անձը քահանան է: Աշխարհականներից և ոչ ոք իրավունք չունի մկրտութիւն կատարելու, քանի որ այդ իրավունքն ու իշխանութիւնը աստվածադիր օրհնութեամբ առաքյալների կողմից փոխանցվեցին քահանաներին:

10. Պետք է իմանալ, որ արգելվում է կրկնամկրտութիւն-

նը, որովհետև մարդը մեկ անգամ է ծնվում, և քանի որ մկրտութունն իր մեջ ծննդյան խորհուրդն ունի, ուստի մեկ անգամ էլ մկրտվում է. «Մեկ Տեր կա, մեկ Հավատք, մեկ մկրտութուն»,- ասում է Պողոս առաքյալը (Եփես. Դ 5):

11. Նոր ծնունդը մկրտությամբ մեզ իրավունք է տալիս նաև նոր անուն ունենալ: Որևէ մեկը մկրտվելով կարող է իր անունը փոխել՝ որպես Քրիստոսով վերածնված նոր մարդ:

12. Մկրտութունից առաջ մեզ մոտ պետք է ունենանք խաչ, կարմիր ու սպիտակ թելերից հյուսված նարոտ (որը խորհրդանշում է խաչի վրա Քրիստոսի կողից հոսած արյունն ու ջուրը) և փոքրիկ սրբիչ, որն անհրաժեշտ է լվացած դեմքը սրբելու համար: Ընդունված է այդ սրբիչը սրբությամբ պահել:

13. Եթե պսակի համար կան արգելված օրեր, ապա մկրտութունը կարելի է կատարել տարվա բոլոր օրերին:

14. Մկրտվել կարող են նաև հղի կանայք, բայց նրանց մկրտութունը պտղին չի վերաբերում:

15. Մկրտվողը մեկընդմիջտ դառնում է Քրիստոսի Եկեղեցու անդամ: Հայ Եկեղեցին մասն է Քրիստոսի Ընդհանրական Եկեղեցու, հետևաբար, եթե որևէ մեկը մկրտվել է Հայ Եկեղեցում, ուրեմն Հայ Եկեղեցու անդամ է և պարտավոր է գեթ իր աղոթքներով սատար կանգնել այդ Եկեղեցուն:

16. Մկրտութունից հետո գործած մեղքերից թողութուն ստանալու համար սահմանված է Ապաշխարության խորհուրդը:

17. Մկրտության խորհրդին անմիջապես հաջորդում է Դրոշմի խորհուրդը:

Այսպիսով, եթե քո մեջ հասունացել է հոգևոր վերածննդի պահը, մի՛ երկմտիր, հավատա՛ Աստուծո

առաջնորդությանը և գնա՛ Եկեղեցի: Կնքի՛ր Հաշտության այդ դաշինքը, որը կենսորոշ ու վճռական է մեզանից յուրաքանչյուրի համար:

Տե՛ր, աղաչում եմ Քեզ, օգնիր ինձ՝ մեղավորիս, հասկանալու Քո գաղտնիքները: Բացի՛ր իմ աչքերը տեսնելու Քո անտեսանելի խորհուրդները, & ուժ տուր ինձ՝ ծնվելու մկրտության սուրբ ավազանից. ամեն:

Դ Ր Ո Շ Մ

«Եվ նա, որ հաստատեց մեզ ի Քրիստոս ձեզ հետ միասին & օծեց մեզ, Աստված է, որ մեզ կրթեց էլ & Հոգու առհավատչյան գրեց մեր սրտերի մեջ» (Բ Կորնթ. Ա 21-22):

ԳՐՈՇՄԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Մկրտության մաքրագործող խորհրդին հաջորդում է Դրոշմի շնորհաբաշխ խորհուրդը: Եվ եթե մկրտությամբ չեշտը դրվում է առավելապես մարդու մաքրագործման վրա, ապա դրոշմի խորհրդով՝ հավատքի մեջ գործնալու: Այս խորհուրդը Սուրբ Հոգու նորոգիչ շնորհների ընդունման համար է: Ստանալով աստվածային շնորհները՝ մարդը գործնում է Հոգով և անտեսանելի գրահներով ու զենքերով սպառազինվում ընդդեմ չարի հարձակումների:

Գործք Առաքելոցը վկայում է, որ առաքյալները մկրտավորների վրա ձեռք էին դնում, և վերջիններս այդպիսով ստանում էին Սուրբ Հոգու պարգևները (Գործք. Բ 16-18): Սակայն երբ հավատացյալների բազմութունն առավել մեծացավ, և երբ քրիստոնյա համայնքները ընդարձակվեցին ու սփռվեցին աշխարհով մեկ, առաքյալները այլևս չէին կարող անձնապես յուրաքանչյուր մկրտվողի վրա ձեռք

զնել: Եվ որպեսզի մկրտվողները չզրկվեն Սուրբ Հոգու կեցողցիչ պարգևներից, առաքյալները ձեռնադրուելթյան արարողութունը փոխարինեցին յուզով օծելու՝ Դրոշմի խորհրդով: Կարգադրեցին նաև, որ օծումը կատարեն երեցները:

Յուզով օծումը հայտնի էր դեռևս Հին Ուխտի ժամանակ: Սակայն միայն Հիսուսի մարդեղութամբ՝ Օծյալի գալստյամբ այն կատարելապես իմաստավորվեց և դարձավ աստվածային: Միով բանիվ՝ Դրոշմը խորհրդանշում է Սուրբ Հոգու էջքը մկրտվածներին վրա:

ԴՐՈՇՄԻ ՆՅՈՒԹԸ

Դրոշմի խորհուրդը կատարվում է սրբալույս Մյուռոնով: Մյուռոն հունարեն բառ է, որ նշանակում է՝ անուշահոտ յուզ: Նրա գլխավոր բաղադրիչը ձիթենու յուղն է՝ ձեթը, որին խառնում են նաև 40-ից ավելի անուշահոտ նյութեր, որոնցից գլխավորը Բալասանն է: Մեր Եկեղեցում Ս. Մյուռոն պատրաստելու և օրհնելու իրավունքը վերապահված է Կաթողիկոսին: Մյուռոնի աստվածաբանական իմաստը արտահայտված է նրա օրհնության աղոթքում, մասնավորապես հետևյալ հատվածում.

«Արդ, Դու նույն Ինքդ Տեր մեր Աստված, խոնարհվելով դեպի Քո ծառաների աղաչանքները առաքիլ Քո առատ ողորմությունը այս ձիթենու պտղի մեջ, որ մարդկանց ազգի փրկության ու օգտակարության համար տվեցիր, & բնակեցրու մեր մեջ Սուրբ ու Բարերար Հոգուդ շնորհները՝ ի գործակցություն & ի լրումն Քո սուրբ խորհուրդների...»:

ԴՐՈՇՄԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Հայոց Եկեղեցին մկրտության և դրոշմի խորհուրդները կատարում է միաժամանակ որպեսզի մկրտության մաքրագործությունից հետո անմիջապես ստանանք աստվածային շնորհները: Եկեղեցին դրոշմի խորհուրդը միացրել

է մկրտության խորհրդին՝ նկատի ունենալով Քրիստոսի օրինակը: Երբ Նա սուրբ Հովհաննես Մկրտչի կողմից Հորդանան գետում մկրտվելուց հետո ջրից դուրս եկավ, Սուրբ Հոգին աղավնակերպ իջավ նրա վրա, և երկնքից ձայն լսվեց, որ ասում էր. «Դա է Իմ սիրելի Որդին, որն ունի իմ ամբողջ բաղնահանութիւնը» (Մատթ. Գ 17): Եվ սուրբ Գրիգոր Լուսավորիչն էլ, երբ Արածանի գետի մեջ մկրտում էր Հայոց ազգին, միաժամանակ օծում էր սուրբ մեռոնով, ինչպես վկայում է Ագաթանգեղոսը (Ագաթ. ձժԸ):

Դրոշմի խորհուրդը կոչում ենք նաև ԿՆՈՒՄՔ, քանի որ աստվածային կնիքով դրոշմվում են մկրտվողի մարմնի համապատասխան մասերը՝ զգայարանները:

Քահանան իր մեռոնաբաշխ մատով կնքում է մեր ճակատը և ասում. Յուզն անուշ, Հիսուս Քրիստոսի անունով հեղվելով քեզ վրա, թող լինի երկնավոր անապական պարգևների կնիքը: Այնուհետև ձեռքը սահեցնելով մեր աչքերի վրայով՝ ասում է. Հիսուս Քրիստոսի անունով դրոշմվող կնիքս այս թող լուսավորի քո աչքերը, որպեսզի երբեք հավիտենական մահով չննջես: Հետո դրոշմում է մկրտվողի ականջներն ու ասվում. Օծումն այս սրբության թող լինի քեզ լսողություն աստվածային պատվիրանների համար: Հոտառության զգայարանը հաջորդն է այս շարքում. Հիսուս Քրիստոսի անվամբ դրոշմվող կնիքն այս թող լինի քեզ համար հոտ անուշության, որը կառաջնորդի քեզ կյանքից դեպի կյանք: Հաջորդում են շուրթերը. Հիսուս Քրիստոսի անվամբ դրոշմվող կնիքն այս թող լինի քեզ համար պահպանություն բերանի և ամուր փական քո շրթունքներին: Հետո ձեռքերն են դրոշմվում. Հիսուս Քրիստոսի անվամբ դրոշմվող կնիքն այս բարիք գործելու պատճառ թող լինի քեզ համար՝ գործով և վարքով հնարավորին չափ առաքինություններ կատարելու: Այնուհետև դրոշմվում է կուրծքը (սրտին մոտ). Կնիքս աստվածային թող սուրբ սիրտ հաստատի և ուղիղ հո-

գի նորոգի քո մեջ: Թիկունքն օծելիս հետևյալ խոսքերն է ասվում. Հիսուս Քրիստոսի անվամբ գրողմվող կնիքն այս թող լինի քեզ համար ամբողջյան վահան, որով կկարողանաս հանգցնել չարի արձակած բոլոր մխացող նետերը: Եվ ամենից վերջում ոտքերին. Կնիքն այս աստվածային թող ուղղի քո ընթացքը դեպի հավիտենական կյանք, որպեսզի երբեք չսասանվես:

Ուրեմն, Դրոշմը Հաստատություն խորհուրդ է, որ տրվում է մարդուն՝ զորացնելու և արիացնելու համար: Մարդը հաստատվում է Աստծու մեջ, դառնում Սուրբ Հոգու տաճար և ժառանգորդ Երկնքի Արքայություն:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոգևորականի կողմից մեռնով դաջված այս խաչանիշ կնիքն անփոխարինելի է: Այն սովորեցնում է մեզ արժե-վորել մեր բոլոր զգայարանները: Եթե փորձենք հոգավ մեր զգայարաններից յուրաքանչյուրի մասին առանձին, ապա առավել հեշտորեն կկարողանանք մաքուր պահել մեր անձը: Այս է հիշեցնում մանավանդ սուրբ Եփրեմ Խուրեմ Ասորին իր աղոթքներից մեկի մեջ. «Լուեցրո՛ւ, Տե՛ր, իմ շուրթերը բամբասե-լուց, լեզուս՝ չար խոսելուց, աչքերս՝ թյուր հայացքից, ականջներս՝ չար լուր լսելուց, ձեռքերս՝ հախճաղակելուց, ոտքերս՝ անառակ ընթացքից: Եվ բոլոր անդամներս պարսպի՛ր, զգաստացրո՛ւ միշտ Քեզ հաճելին կատարելու»:

Նորադարձ քրիստոնյայի համար դրոշմի խորհուրդը իր հոգեգալուստն է: Ինչպես առաքյալների վրա հոգեգալուստը հրե լեզուների տեսքով եղավ, այսօր էլ այդ խորհուրդը մեզ ներկայանում է մեռնի անուշահոտ յուզով: Դրոշմի խորհուրդը ևս անկրկնելի է, ինչպես Մկրտությունը:

Մկրտություն, Դրոշմի խորհուրդներից հետո ծիսա-կատար հոգևորականը մեզ արժանացնում է ընդունելու Եկեղեցու յոթ խորհուրդներից ևս մեկը՝ Հաղորդություն

խորհուրդը:

Այսպիսով, Դրոշմի խորհուրդով մարդը ստանում է նոր կյանքի աստվածային կնիքները՝ Սուրբ Հոգու ընդունման նշանները: Եվ միայն կնքվելուց հետո է մարդը դառնում քրիստոնյա այսինքն՝ օծված, և ընծայվելով Սուրբ Հոգուն՝ որդեգրվում է Հայր Աստծուն:

Խաղաղություն քեզ, փրկյալ Աստուծո,
Խաղաղություն քեզ, օծյալ Աստուծո:

Ա Պ Ա Շ Խ Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Եվ արդ, ասում է ձեր Տեր Աստվածը,- զարձեք ինձ ձեր ամբողջ սրտով, ծոմապահությամբ, լալով ու կոծելով: Ձեր սրտերը պատուեցեք & ոչ թե ձեր հագուստները: ...զարձեք ձեր Տեր Աստծուն, որովհետև & նա ողորմած է & դիմախոս...» (Հովել Բ 12-13):

Այո՛, ողորմած է Աստված, ով մեզ համար ապաշխարություն ճանապարհ է պատրաստել, և Քրիստոսի առաջին կանչն ու քարոզն էլ այդ են պատգամում.

«Ապաշխարեցե՛ք, որովհետև երկնքի արքայությունը մոտեցել է» (Մատթ. Դ 17):

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ապաշխարություն խորհուրդը սահմանել է Ինքը՝ Հիսուս Քրիստոս (Հովհ. Ի 22-23): Ապաշխարությունն նշանակում է ապա-աշխարել, հետո լալ, ողբալ, կոծել, մի խոսքով՝ կատա-րած մեղքի համար զղջալ և գործած չարիքի դիմաց սեփա-կան անձը պատժել: Ապաշխարություն խորհուրդի ժամանակ հավատացյալը սրտի անկեղծ զղջումով խոստովանում է իր մեղքերը հոգևորականի առջև և նրա միջնորդությամբ անտեսանելիորեն թողություն ստանում մեղքերից անմի-

Ջապես Հիսուս Քրիստոսից: Ապաշխարութեան խորհրդով թողութիւնն է տրվում մկրտութիւննից հետո գործած բոլոր մեղքերին՝ թե՛ ներելի և թե՛ մահացու: Եվ մինչ Մկրտութեան և Դրոշմի խորհուրդներն անկրկնելի են, Ապաշխարութեան խորհուրդը կատարվում է պարբերաբար՝ հավատացյալի ողջ կյանքի ընթացքում, քանի որ մարդը իր բնութեամբ տկար է և մշտապես ենթակա մեղանջումի: Ապաշխարութեան խորհրդակատարը օծյալ հոգևորականն է: Քանի որ Քրիստոս նրանց այդպիսի իշխանութիւն տվեց՝ ասելով.

«Եթե մեկի մեղքերը ներեք, նրանց ներված կլինի, եթե մեկի մեղքերը չներեք, ներված չի լինի» (Հովհ. Ի 22-23): Ինչպես նաև. «Ճամարիտ եմ ասում ձեզ, ինչ որ կապեք երկրի վրա, կապված պիտի լինի երկնքում: Եվ ինչ որ արձակեք երկրի վրա, թող արձակված լինի երկնքում» (Մատթ. ԺԸ 18):

Ապաշխարութեան սկիզբը գործած մեղքն ընդունելն է: Ապաշխարել պետք է կենդանի ու անկեղծ հավատով, որովհետև միայն այդպիսի ապաշխարութիւնն է ընդունելի Աստծուն և այդպես կարելի է վերստին հաշտվել Աստծու հետ: Եվ եթե «Մեղքի վարձը մահն է» (Հռոմ. Զ 23), ապա Ապաշխարութեան պտուղը՝ փրկութիւնն ու հավիտենական կյանքը:

ԱՊՍՇԽԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Զղջում. Իր մեղքը գիտակցող անձը պետք է սրտում անկեղծ զղջում ունենա կատարածի համար, ինչպես նաև վճիռ՝ այն այլևս չկրկնելու:

Խոստովանութիւն. Երբ մարդը մկրտութիւննից հետո գործած մեղքերը խոստովանում է հոգևորականի առջև՝ արձակում (մեղքերի թողութիւն) ստանալու ակնկալիքով:

Առաջին դարերի Եկեղեցում խոստովանութիւնը կա-

տարվում էր հրապարակավ, և հազվադեպ՝ առանձնական: 4-րդ դարում հրապարակավ իրենց մեղքերն էին խոստովանում միայն մարդասպանները, կռապաշտները և պոռնիկները: Հետագայում՝ 5-րդ դարի սկզբին, հրապարակային խոստովանութիւնը դուրս եկավ կիրառութիւնից: Խոստովանութիւնը համայնքի անդամների ներկայութեամբ կատարվելու փոխարեն սկսվեց առանձին քահանայի ու խոստովանողի միջև ծածուկ կատարվել: Հայաստանյայց Եկեղեցին պահել է թե՛ հրապարակային (ընդհանրական), թե՛ առանձնական խոստովանութեան ձևերը:

Առանց մեղքերից արձակում ստանալու ակնկալութեան խոստովանութիւնը թերի է: Խոստովանողի խղճմամբը լավ քննելուց հետո քահանան խորհում է, թե նա ինչպիսի ապաշխարութիւն պիտի կրի, խրատում ու զգուշացնում է, որ այլևս չմեղանջի: Այնուհետև քահանան արձակում է նրան մեղքերից:

Վճարում. Յուրաքանչյուր քրիստոնյա պետք է պատրաստ լինի իր կատարած մեղքի դիմաց որոշակի ապաշխարութիւն կրելու: Այսինքն՝ կամավոր հանձն առնել խոստովանահոր կողմից իրեն սահմանված պատիժը՝ նեղութիւններ կրելը: Մեղքը սիրո բացակայութիւնն է, զոհողութիւնը՝ սիրո երախտիքը: Հետևաբար մեղքը զոհողութեամբ պետք է ջնջենք, որպեսզի և՛ մեր խիղճը խաղաղվի, և՛ Աստծու ողորմութեան ակնկալիքն ունենանք:

Այսու քահանան, լսելով մեր անկեղծ խոստովանութիւնը, իրավունքն ունի մեր գործած մեղքերի համեմատ ապաշխարութիւն սահմանել մեզ համար, այն է.

աղոթք, պահք, ողորմութիւն:

Երբ մեղանջում ենք, հավիտենական պատիժ է մեզ

վերագրվում, սակայն մեր գղջալու և փոխվելու դեպքում Աստված նաև մեր պատիժն է փոխում ժամանակավորի: Այս պատճառով, թեև խոստովանությունը թողնելու է տրվում բոլոր մեղքերին, սակայն մնում է պատիժը, որը վճարում ենք աղոթքով, պահքով և ողորմությունամբ: Երբեմն մեղավորն ինքն է կամավորապես ստանձնում որոշակի ապաշխարություն, ինչպես օրինակ՝ որևէ վայելքից հրաժարում և այլն:

Ապաշխարության բուն նպատակը մեղավորին հոգեպես վերականգնելն է: Եվ Եկեղեցին ամեն օր մեզ հիշեցնում է մեր մեղքերը՝ նպատակ ունենալով մեզ առավել զգոն, ուշիմ ու արթուն Աստծու ծառայություն առաջնորդելու:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսու լավ ըմբռնելու համար Ապաշխարության խորհուրդը, պետք է մտապահենք հետևյալ կարևոր հանգամանքները.

1. Ապաշխարության խորհուրդը սկսվում է մեղքի գիտակցումից:
2. Մեղքը գիտակցող անձը պետք է անկեղծ գղջում ունենա և այն այլևս չկրկնելու վճռականություն:
3. Նա պետք է դիմի Եկեղեցու օծյալ հոգևորականներին՝ մեղքերը խոստովանելու մտադրությամբ:
4. Որևէ այլ անձ, բացի օծյալ հոգևորականից, իրավունք չունի որևէ մեկին խոստովանեցնելու և մեղքերից արձակում տալու: Այդ իշխանությունը աստվածադիր օրենքով միայն նրանց է տրված:
5. Խոստովանության գնացող անձը պետք է պատրաստ լինի իր գործած մեղքերի դիմաց որոշակի նեղություն կրելու:

«Բայց Աստված, անդիտություն ժամանակներն անտես առնելով, այժմ այն է պատվիրում մարդկանց, որ ամեն ոք ապաշխարի»
(Գործք Ժէ 30)

Հ Ա Ղ Ո Ր Դ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

- «Նմանվեցեք Աստծուն, որպես սիրելի զավակներ, & ընթացեք սիրով, ինչպես որ Քրիստոս սիրեց մեզ & իր Անձը մասնեց մեզ համար որպես անուշահոտ պատարագ & զոհ Աստծուն» (Եփես. Ե 1-2):

ԽՈՐՀՐԴԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Հաղորդության խորհուրդը Հիսուս Քրիստոս հաստատեց Վերջին ընթրիքի ժամանակ, այդ պատճառով էլ այն հաճախ կոչում ենք նաև՝ Խորհրդավոր: Տասներկու առաքյալների հետ զատկական սեղան նստած՝ Հիսուս վերցրեց բաղարջ հացը, օրհնեց, տվեց նրանց ու ասաց.

«Առե՛ք, կերե՛ք, այս է Իմ մարմինը»:

Հետո վերցրեց անխառն գինով լի բաժակը, գոհություն հայտնեց, տվեց աշակերտներին ու ասաց.

«Խմեցե՛ք դրանից ամենքդ, որովհետև այդ է նոր ուխտի Իմ աղյուներ, որ թափվում է շատերի համար՝ իրենց մեղքերի թողություն համար»:

Այնուհետև պատվիրեց.

«Այս արե՛ք իմ հիշատակի համար» (Մատթ. ԻԶ 26-29, Ղուկ. ԻԲ 19):

Այսինքն՝ Հաղորդության խորհուրդը Հիսուսի Ինքնազոհաբերման, պատարագման խորհուրդն է:

Եվ Ս. Պատարագի արարողության բուն առանցքը Հաղորդության խորհուրդն է, որի ժամանակ Հիսուս Քրիստոս՝ Անմահ Գառը, որպես Հաշտության զոհ, խորհրդավոր կերպով պատարագվում է Ս. Սեղանի վրա՝ բաշխելով մեզ իր սուրբ Մարմինը ու սուրբ Արյունը, որով քավություն

և թողություն է տրվում մեր մեղքերին:

Այդ պատճառով էլ Ս. Հաղորդության խորհուրդը կոչվում է նաև Անարյուն Պատարագ:

ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Հաղորդվել նշանակում է Հաղորդակցության մեջ ղնել արարածին՝ Արարչի հետ, մեղավորին՝ Քավչարարի հետ, փրկվածին՝ Փրկչի հետ: Այս խորհուրդով կենսական կապ է ստեղծվում քրիստոնյայի և Քրիստոսի միջև:

Հաղորդվողները, Ս. Պատարագի ժամին ճաշակելով Տիրոջ Մարմինը ու Արյունը, խորհրդաբար միանում են ոչ միայն Աստծուն, այլև իրար, և այդպիսով կազմում են Քրիստոսի Մարմինը՝ Եկեղեցին:

Ս. Հաղորդության խորհուրդը Եկեղեցու բոլոր անդամներին մեկտեղում է եղբայրական սիրո և խաղաղության կապով:

Այդ պատճառով էլ առանց այս խորհրդի Եկեղեցին չի կարող ապրել, քրիստոնյան չի կարող դառնալ ժառանգորդ Երկնքի Արքայության, հետևաբար չի կարող հավիտենական կյանք ունենալ.

«Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե չուտեք մարդու Որդու մարմինը & չըմպեք նրա արյունը, ձեր մեջ կյանք չեք ունենա: Ով ուտում է իմ մարմինը & ըմպում իմ արյունը, հավիտենական կյանք ունի. & ես նրան վերջին օրը հարություն ատնել պիտի տամ, քանի որ իմ մարմինը ճշմարիտ կերակուր է, & իմ արյունը՝ ճշմարիտ ըմպելիք: Ով ուտում է իմ մարմինը & ըմպում իմ արյունը, կենսավի իմ մեջ, & ես՝ նրա մեջ»

(Հովհ. Զ 54-57):

Խորհրդի սպասավորը օծյալ հոգևորականն է, իսկ արդյունքը՝ Հաղորդվողի շնորհների բազմացումը և ամենօրյա մեղքերի քաղցրությունը: Այս կապակցությամբ ս. Հովհաննես

Մանդակունի հայրապետը ասում է. «Նրանք, ովքեր հավատով & երկյուղածությամբ են մոտենում Քրիստոսին, լուսավորվում են Սուրբ Հոգով & առաքինի գործերով օրեցօր վեր բարձրանում»:

Ուրեմն շատ կարևոր է, որ մեծագույն հավատով մոտենանք այս Սուրբ խորհրդին:

ԽՈՐՀՐԴԻ ՆՅՈՒԹՐ

Խորհրդակատարման նյութը ցորենի անթթխմոր հացն է և խաղողի անապական գինին:

Ս. Գրիգոր Տաթևացին այսպես է բանաձևում խորհուրդը. «Հաղորդութունը իր մեջ պարունակում է Քրիստոսին՝ հաց ու գինու տեսքով, & նրանցից յուրաքանչյուրի մեջ Քրիստոս առկա է ամբողջապես»:

Հացն ու գինին խորհրդավոր կերպով Քրիստոսի ճշմարիտ Մարմնի ու Արյան են փոխակերպվում Ս. Պատարագի ընթացքում՝ Սրբազործման պահին: Հացի ու գինու արտաքին հատկանիշները մնում են նույնը, իսկ ներքին էությունը փոխակերպվում է Քրիստոսի Մարմնի ու Արյան: Մեր Եկեղեցում հացն ու գինին օրհնում են առանձին-առանձին և այնուհետև ճաշակելիս միավորում:

Ի՞նչ է ՀԱՐԿԱՎՈՐ ՀԱՂՈՐԴՎԵԼՈՒՑ ԱՌԱՋ

Հաղորդվելուց առաջ առաջին պարտավորությունը, որ մեր առջև ղնում է Եկեղեցին, մկրտված լինելն է, ինչպես նաև ուղղափառ վարդապետության խոստովանությունը: Կարևոր է նաև հավատո խոստովանությունը, առանց դրա իմացության մենք չենք ըմբռնի, թե ինչ ենք ճաշակում՝ սովորական հաց և գինի, թե՞ Քրիստոսի Մարմինն ու Արյունը: Այս է պատճառը, որ Հաղորդության ժամանակ զննչում է հավատո խոստովանության մի փոքրիկ դրվագ.

«Ասացէ՛ք մեղայ Աստուծոյ. հաւատամք ի Հայր Սուրբ Աստուած ճշմարիտ, հաւատամք յՈրդին Սուրբ Աստուած ճշմարիտ, հաւատամք եւ ի Հոգին Սուրբ Աստուած ճշմարիտ: Զի Սա է կենդանի եւ կենդանա-

որը մարմինն եւ արին Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ լինի մեզ ի քառութիւնն եւ ի թողութիւն մեզաց մերոց: Խոստովանիմք եւ Հաւատամք»:

Հաղորդութիւնն ընդունելու երկրորդ կարևոր պայմանը Հոգևոր մաքրութիւնն է: Պողոս առաքյալը Հետևյալ խրատն է տալիս մեզ.

«Ով որ ուտի այս հացը կամ խմի Տիրոջ այս բաժանն անարժանորեն, պարտական պիտի լինի Տիրոջ մարմնին ու արցանը: Թող մարդ նախ ինքն իրեն փորձի & ապա ուտի այդ հացից ու խմի այդ բաժակից. որովհետև ով ուտում է & խմում անարժանորեն, իր իսկ դատապարտութիւնն է ուտում & խմում, քանի որ չի գատորոշում Տիրոջ մարմինը:

Դրա համար իսկ ձեր մեջ բազում Հիվանդներ & ցավազարներ կան, & շատերն էլ մեռած են. որովհետև եթե մենք մեզ քննելուք, ապա չէինք դատապարտվի: Իսկ եթե դատվում ենք, Տիրոջից խրատվում ենք, որպեսզի աշխարհի հետ չդատապարտվենք»

(Ա. Կորնթ. ԺԱ. 27-30):

Այս է պատճառը, որ Հաղորդութիւնից առաջ անպայմանորեն պետք է քննենք ինքներս մեզ, զոջանք մեր սխալներին համար, խոստովանենք Աստծու և Նրա պաշտոնյայի՝ Հոգևորականի առջև: Այդ օրը պետք է նաև Ֆիզիկապես մաքրուր լինել և նախքան Հաղորդութիւնը, որևէ կերակուր չճաշակել:

ԱՄՓՈՓՈՒՄ

Քրիստոնյայի կյանքի իմաստը Աստծու հետ Հաղորդակցութեան մեջ է: Այս մտածումով է, որ մենք պետք է մոտենանք Հաղորդութեան սուրբ խորհրդին: Եվ որպեսզի մեր մերձեցումն Աստծու հետ իրական լինի, վերհիշենք այն կարևոր պարագաները, որոնց առկայութեան դեպքում իրավունք ենք ունենում Հաղորդվելու:

1. Անհրաժեշտ է լինել մկրտված և ունենալ հավատի ուղղափառ խոստովանութիւն:

19

2. Հաղորդութիւն ընդունելու օրը, Հաղորդութիւնից առաջ արգելվում է որևէ կերակուր ճաշակելը:

3. Մինչև Աստծուն մերձենալու այդ պահը, նույնիսկ Պատարագից էլ առաջ, խրատուսելի է ինքնաքննութիւնը, որպեսզի ճանաչելով ինքդ քեզ՝ կարող լինես վճռելու՝ հաղորդվե՞լ, թե ոչ:

4. Որևէ պատճառով ինքնաքննութիւնն անտեսելով Հաղորդվելը արդարացուցիչ չէ:

5. Մեղքի պատճառով Աստծու և մարդու միջև խզված կապը վերականգնելու լավագոյն միջոցը Հաղորդութիւնն է: Հետևաբար այդ կապը վերականգնելու համար պետք է զոջում և ցավ ունենալ գործած մեղքերի համար, այնուհետև՝ խոստովանութիւն:

6. Մեծ Պահոց շրջանում, երբ եկեղեցու վարագույրը փակ է, պատարագի ժամանակ Հաղորդութիւն չի տրվում:

7. Հաղորդութիւն տրվում է բոլոր բաց պատարագների ժամանակ՝ Տերունի, սրբոց, մեռելոց և այլն:

8. Հղի կանայք կարող են Հաղորդվել:

9. Ա. Հաղորդութիւն չի տրվում հետ ծննդաբերութեան քառասունքի մեջ գտնվող կանանց և ամսականի ժամանակ:

10. Ա. Հաղորդութիւն ստանալու բուն պահը պատարագի վերջում է, երբ սարկավազը ասում է. «Երկեղիւ եւ հաւատով յառաջ մատիք եւ սրբութեամբ Հաղորդեցարուք»:

11. Ծանր հիվանդ հավատացյալները կարող են Հաղորդվել տանը:

«Քրիստոս պատարագեալ բաշխի ի միջի մերում. պէլուխա: ԶՄարմին իւր տայ մեզ կերակուր եւ սուրբ գԱրին իւր ցօղէ ի մեզ. պէլուխա»:

Ձ Ե Ռ Ն Ա Դ Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն

20

Հովիվը քաջ, որ էր անձը դրեց բանավոր հոտի համար, թող կարողութունն տա քեզ էր հոտն արդարությամբ հովվելու՝ քո անձի գոհողությամբ հոտի համար օրինակ լինելով:

Մաշտոց Ձեռնադրուկայան

ՁեռնԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ձեռնադրուկայանը (Քահանայություն կամ Խորհրդի կարգը), աստվածային պաշտոնին նվիրվելու՝ Ավետարան քարոզելու, Եկեղեցու խորհուրդները սպասավորելու, Քրիստոսով փրկություն շնորհելու, ժողովրդին ապաշխարության հրավիրելու, նաև շնորհ փոխանցելու խորհուրդն է: Ձեռնադրուկայանը տրվում է եպիսկոպոսի կողմից և նվիրագործվում Սուրբ Հոգու օծումով: Խորհուրդը Մկրտություն ու Դրոշմի նման անկրկնելի և անջնջելի է:

ԽՈՐՀՐԴԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Այս խորհուրդը նույնպես հաստատել է Հիսուս Քրիստոս: Իր տնօրինական առաքելության ընթացքում ընտրելով իր աշակերտներին ու նրանց քահանայապետական իշխանություն տալով (Ղուկ. ԻԳ 50-51):

Այդ իշխանությամբ առաքյալները սարկավազներ էին ձեռնադրում (Գործք, Զ 5-6), Տիրոջ խոսքի համաձայն կապում էին և արձակում մարդկանց մեղքերը, իրենց ձեռքերը դնելով հիվանդների վրա՝ բժշկում նրանց (Գործք, ԻԸ 8-9): Այդ նույն իշխանությունը առաքյալները Սուրբ Հոգու շնորհով փոխանցեցին իրենց հաջորդներին, այդ իշխանությունը ստանում է նաև այսօր ձեռնադրվող հոգևորականը: Այսպես կազմավորվեց Եկեղեցու նվիրապետական կառույցը:

ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԸ

Այն ունի ինը աստիճան.

Ա) Դուռնապանություն, Բ) Ընթերցողություն, Գ) Երգում-նեցուցչություն, Դ) Ջահնկալություն, Ե) Կիսասարկավագություն, Զ) Սարկավագություն, Է) Քահանայություն, Ը) Եպիսկոպոսություն, Թ) Կաթողիկոսություն:

Դուռնապանությունից մինչև Սարկավագությունը կոչվում են փոքր աստիճաններ, իսկ վերջին երեքը՝ մեծ աստիճաններ: Այս փոքր աստիճանները խորհրդագործական կարգին չեն պատկանում, այլ սոսկ մասնավոր տվչություններ են Եկեղեցու ծիսական կանոնավորության համար և կազմում են դպրաց դասը: Փոքր աստիճանները թեև վեցն են, սակայն կա նաև Սաղմոսերգուհի և Ավելածուհի պաշտոնը:

ԴՌՆԱՊԱՆ. Եպիսկոպոսի հրամանով բացում և փակում է եկեղեցու դուռը: Աստիճանը տրվում է Եպիսկոպոսի կողմից, եկեղեցուց դուրս, նվիրյալին հանձնելով եկեղեցու դռան բանալիները:

ԸՆԹԵՐՑՈՂ. Աստիճանը տրվում է եկեղեցում, դռան մոտ: Ընթերցողի պաշտոնն է կարդալ մարգարեական և առաքելական ընթերցվածքները: Նա պետք է հասուն անձ լինի:

ԵՐԳՄՆԵՑՈՒՅԻՉ. Աստիճանը տրվում է եկեղեցու ատյանում: Այսօր այս պաշտոնը գոյություն չունի: Նախկինում նրա պարտականությունն է եղել. ա) Հիվանդների վրա ձեռք դնելով հրամայել դեերին դուրս գալու նրանցից, բ) Մկրտվողներին հրաժարեցնել սատանայից:

ՋԱՀՆԿԱԼ. Աստիճանը տրվում է եկեղեցու դասի առջև: Ջահնկալը պարտավոր է վառել եկեղեցու մոմերը ու ջահերը, Սուրբ Պատարագի նշխարը և բաժակը պատրաստել: ԿԻՍԱՍԱՐԿԱՎԱԳ. Աստիճանը տրվում է եկեղեցու

դասի առջև: Կիսասարկավազը պարտավոր է խնկարկել, զգեստավորել պատարագիչին, սպասարկել ս. Պատարագի խորհուրդը և այլն:

ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ

«Սարկավագ» բառը հունարեն ծագում ունի, որ նշանակում է «սպասավոր, ծառա»: Առաքելական շրջանում սարկավագները սպասարկում էին կարիքավորներին, ինչպես նաև տնօրինում էին քրիստոնեական համայնքի տնտեսական հարցերը: Նրանց պարտականության մեջ է մտնում սուրբ Սեղանի առջև սպասարկել պատարագիչ հոգևորականին: Ձեռնադրուկի ընթացքում եպիսկոպոսը նրան հետևյալ ծիսական արտոնություններով է օժտում. Պատարագի ընթացքում Ավետարանի ընթերցում, ինչպես նաև խորհրդանոցից սուրբ Խորհուրդը վերաբերելով ընծայում պատարագիչ հոգևորականին:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ

Սարկավագական աստիճանին հաջորդում է քահանայականը: Քահանան Եկեղեցու խորհուրդները, աստվածային պաշտամունքները և արարողությունները կատարող անձն է և հովիվը: Հայաստանյայց Եկեղեցին ունի նաև կուսակրոն քահանաներ, որոնք կոչվում են արեղաներ: Արեղաները ստանում են նույն քահանայական ձեռնադրությունն ու օծումը՝ իրենց լուծը ծանրացնելով կուսություն ուխտով:

ՎԱՐԳԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ

Այս աստիճանը Եկեղեցում առանձին կարգ չի ներկայացնում, այլ կուսակրոն քահանայություն ունեցողին տրվում է որպես գիտական աստիճան: Վարդապետական այս աստիճանի հատուկ պաշտոնն է քարոզել և ուսուցա-

նել, մեկնել Աստվածաշունչը, Եկեղեցու դավանությունը, ծեսն ու կանոնները բացատրել և ընդհանուր առմամբ հսկել Եկեղեցու վարդապետության անաղարտ պահպանմանը: Վարդապետությունն ունի 14 աստիճան: Առաջին չորսը մասնավոր վարդապետի աստիճաններն են, իսկ մնացածը՝ մեծ կամ ծայրագույն վարդապետի:

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ

Եպիսկոպոսությունը Եկեղեցու նվիրապետական կարգի բարձրագույն աստիճանն է: Նա Եկեղեցու տեսուչն է (Տիտ. Ա. 8-9), ժողովրդի առաջնորդն ու թեմի կառավարիչը: Միայն եպիսկոպոսն իրավունք ունի Եկեղեցու բոլոր խորհուրդներին ու կարգերին հետ միաժամանակ նաև ձեռնադրություն կատարելու: Բացառությունը մեռնի օրհնությունն է, որը վերապահված է միայն կաթողիկոսին:

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ և ՊԱՏՐԻԱՐՔ

Արքեպիսկոպոս և Պատրիարքը ձեռնադրությամբ և օծումով եպիսկոպոսներ են, սակայն վարչականորեն տարբեր իրավասություններ ունեն: Արք կամ Արհի նշանակում է մեծ, այսինքն՝ այն եպիսկոպոսը, ով իր վարչական իրավասությունը ենթակա ունի մեկ կամ ավելի եպիսկոպոսներ: Ներկայումս արքությունը վերածվել է պարզ տիտղոսի, որը տրվում է Կաթողիկոսի կողմից հատուկ կոնդակով:

Պատրիարք հունարեն բառ է և նշանակում է Հայրապետ: Հայ Եկեղեցում պատրիարք են կոչվում Երուսաղեմի, Կ. Պոլսի հայոց նվիրապետական աթոռները գլխավորող արքեպիսկոպոսները:

ԿԱԹՈՂԻԿՈՍ

Կաթողիկոս նշանակում է ընդհանուր պետ: Նա նա-

խանձախնդիր պահպանն է մեր Եկեղեցու՝ դավանություն, ծեսի, կանոնների ու ավանդություն: Կաթողիկոսը Հայաստանյայց Առաքելական Սուրբ և Ուղղափառ Եկեղեցու բացարձակ առաջնորդն է: Նա կոչվում է նաև քահանայապետ, եպիսկոպոսապետ, հովվապետ: Կաթողիկոսն է ձեռնադրում եպիսկոպոսներին և օրհնում սրբալույս մեռոնը: Նրա օրհնությունում և կարգադրությունում են վճռվում Եկեղեցու վարչական, ինչպես նաև դավանաբանական կարևոր խնդիրները: Միայն կաթողիկոսն իրավունք ունի ամուսնալուծություն վճիռ տալու:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ձեռնադրության համար անհրաժեշտ են հետևյալ պայմանները.

1. Լինել չափահաս և ունենալ մարմնական, մտավոր և հոգևոր անթերի վիճակ (Ղևտ. ԻԱ. 16-18, 21):
2. Ունենալ կոչմանը համապատասխան մտային և հոգեվոր պատրաստվածություն:
3. Լինել արժանի աստվածային պաշտոնը ստանձնելուն:
4. Ունենալ ներքին վկայություն իր արժանավորության մասին (Բ Կորնթ. Ժ 18):
5. Ունենալ վկայություն Եկեղեցու (ժողովրդի) կողմից:
6. Ունենալ հանձնառություն՝ հետևելու Հայ Եկեղեցու ուղղափառ վարդապետությունը և Ս. Հայրերի ուսուցմանը՝ միաժամանակ մերժելով բոլոր աղանդավորական շարժումները և հերետիկոսությունները:

Անհրաժեշտ է նաև, որպեսզի նվիրյալը բարեպաշտ ծնողներից ու սուրբ անկողնուց ծնված լինի:

Ահա թե ինչ է ասում ձեռնադրության ու քահանայություն մասին սուրբ Հովհանն Մանդակունին. «Քահանան ամենակալ Աստուծո հցկշտակն է: Եթե արհամարհես,

Աստուծու առջև ես մեղանչում, որը նրան ձեռնադրեց, և նրա միջոցով Ինքն է կատարում պատարագի խորհուրդն ու մկրտությունը: Թեպետ և նրանք արժանի չեն ահեղ խորհրդին մոտենալու, սակայն մարդկանց փրկության համար Աստված չի արգելում Սուրբ Հոգու շնորհները, որովհետև եթե էջի միջոցով և Բաղասմի դյուլթական ճանապարհներով խոսեց մարդկանց փրկության համար, որչափ ևս առավել անարժան քահանայի միջոցով ինքը գործի կղնի ամեն ինչ մեր փրկության համար: Իսկ դու եթե սրբությունում հաղորդակից դառնաս սուրբ Խորհրդին, քահանայի պղծությունը քեզ չի վնասի: Նույնպես եթե որևէ մեկը պղծությունում մերձենա սուրբ Խորհրդին, քահանայի սրբությունը չի օգնի: Իսկ եթե համարես, թե արատավոր քահանայի ձեռքով Սուրբ Հոգու շնորհները չեն իջնում Պատարագի մեջ, և Աստված նրանով չի գործում, հիշի՛ր, որ խախտում ես Եկեղեցու կարգը և քո քրիստոնյա լինելու անունը: Եվ եթե այդպես է, և Պատարագը Պատարագ չէ ըստ քեզ, ուրեմն նաև ձեռնադրությունը ձեռնադրություն չէ, ինչպես նաև քահանայություն կարգը հաստատուն չէ: Այսպիսով, քրիստոնեությունը հույսը սնոտի է, որովհետև բոլորս էլ մեղքերով լեցուն ենք»:

ԻՆՉՊԵՊ ՈՂՋՈՒՆԵԼ ԼԱԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ

Քահանային՝ Օրհնեցե՛ք, Տեր հայր, կամ՝ Օրհնյա՛, Տեր:
Արեղային & վարդապետին՝ Աստված օգնական, Հայր սուրբ:
Եպիսկոպոսին՝ Աստված օգնական, Սրբազան Հայր:
Կաթողիկոսին՝ Աստված օգնական, Վեհափառ Տեր:

Պ Ս Ա Կ Ա Մ Ո Ւ Ս Ն Ո Ւ Թ Յ Ա Ն

«... Նա, ով սկզբից ստեղծեց, արու & էգ արեց նրանց & ասաց. դրա համար տղամարդ պիտի թողնի հորը & մորը ու պիտի գնա իր կնոջ հետ & երկուսը

մեկ մարմին պիտի լինեն: Ապա ուրեմն՝ ոչ թե երկու, այլ մեկ մարմին են: Արդ, ինչ որ Աստված միացրեց, մարդը թող չբաժանի»:

(Մատթ. ժԹ 4-6):

ՊՍԱԿԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Պսակի խորհուրդը Հաստատվել է դեռևս Դրախտում, Աստծու կողմից (Ծննդ. Բ 18, 22-24):

Քրիստոնեական Եկեղեցում Պսակի խորհրդի ժամանակ, այր ու կին քահանայի աղոթքով ու օրհնությամբ ընտանիք կազմելու նպատակով միավորվում են և ստանում Սուրբ Հոգու շնորհը, որով այդ միությունը, որպես անխախտ դաշինք ամրապնդվում է նրանց Համատեղ կյանքի բոլոր օրերի Համար. ունենալու զավակներ և նրանց քրիստոնեական ոգով դաստիարակելու ակնկալիքով:

Երկրի վրա կնքված այս դաշինքի «խորհուրդը մեծ է» (Եփես. Ե 32), քանզի քրիստոնեական պսակը և ընտանիքը պատկերն ու մանրակերտն է երկնային մեծ ու անճառելի խորհրդի՝ մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի ու Իր Եկեղեցու անխախտ միության: Ինչպես փեսան թողնելով իր հորը զնում է Հարսի մոտ, այնպես էլ Հիսուս, թողնելով Հայրական Գահը եկավ, Իր Հարսի՝ Եկեղեցու մոտ և անքակտելիորեն միավորվեց նրա հետ:

Աստվածային այս սիրո օրինակն ու իրադրժույթը քրիստոնեական ընտանիքն է, որի կայացումը Եկեղեցին վավերացնում է Պսակի սուրբ խորհրդով: Այս խորհրդով երկուսը՝ այր ու կին, ստանում են աստվածային օրհնություն, խորհրդավորապես միանում միմյանց, դառնում մեկ մարմին և մշտական կենակցության ուխտի մեջ մտնելով, ըստ Քրիստոսի և իր Եկեղեցու միության օրինակի, նվիրվում են Աստծու արքայության առաջադրման Համար միասնաբար աշխատելուն:

Այս ճանապարհին ամուսինները ո՛չ միայն պետք է արտաքին պարկեշտությունը պահպանեն, այլև ներքին՝ Հոգևոր: Այնպես որ ամուսնություն մեջ մարմնականը չպետք է զերակչուի, այլ Հոգևորը: Մասնավորապես պսակադրության ընթացքում մատանիները, որոնք դրվում են փեսայի ու Հարսի մատին, նշանակն են նրանց միության անխախտելիության, իսկ վառվող մոմերը՝ Հոգևոր ուրախության և աստվածատուր շնորհի: Թագերը, որ դրվում են նորապսակների գլխին, նշանն են նրանց ողջախոհության, քանզի Պսակը սուրբ է, և պետք է զերծ մնալ պոռնիկական ցանկություններից: Գինի խմելը նշանակում է, որ նրանք իրենց Համատեղ կյանքի թե ուրախությունները և թե դառնություններ միասին պետք է ճաշակեն:

ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Եկեղեցին հետևյալ պայմաններն է առաջարկում երիտասարդ զույգերին առողջ և ամուր ընտանիք կազմելու նախաշեմին.

Ամուսնություն կարևորագույն նպատակներից մեկը որդեծնությունն է: Հետևաբար ամուսնական կապի Համար մարմնական կանոնավորությունն անհրաժեշտ է: Առողջական խնդիրներից ելնելով՝ արգելվում է ամուսնությունը կնատների, ներքինիների, ինչպես նաև Հայտնի ամուսնների:

Անհրաժեշտ է նաև հասունությունն ու չափահասությունը, մարմնապես ու Հոգեպես առողջ սերունդ ունենալու, և թե սիրո ու բարոյականության գաղափարի Հաստատության տեսակետից: Ըստ որում կինը պետք է չափահաս լինի (17 տարեկան), իսկ տղամարդն առավել տարիներով (20-25): Կարևորվում է նաև արենակցական կապը: Հայոց Եկեղեցին տասներեքերորդ դարում սահմա-

նադրեց, որ պսակվողները յոթը պորտով բաժանված լինեն միմյանցից (որդին հոր հարաբերությունը մեկ աստիճան է, մեկ պորտ է, թողը՝ երկու, այսինքն՝ երկու անձերի միջև եղած ծնունդների թիվը հաշվվում է որպես աստիճան կամ պորտ, երկու եղբայրներ կամ քույրեր միմյանց նկատմամբ երկու պորտ են, այդ & կին առանձին աստիճան չեն ներկայացնում, որովհետև մեկ մարմին են):

Եկեղեցին անհրաժեշտ է համարում, որ պեսզի ամուսնություն թեկնածու տղամարդն ու օրիորդը լինեն մկրտված և դրոշմված: Եկեղեցին արգելում է որևէ քրիստոնյայի ամուսնությունն այլադավանի հետ, բացառու-թյամբ, եթե վերջինս ընդունի քրիստոնեություն:

Փոխադարձ սիրո հիմքը միահավատությունն է, որովհետև հավատքով է աճում մարդկանց հոգևոր կյանքը: Տղամարդը տան գլուխն է, կինը՝ սիրտը, ուստի գլուխն ու սիրտը փոխադարձ համաձայնությունը, սիրով ու նվիրումով պետք է կապվեն միմյանց հետ:

Պսակի խորհուրդը անհրաժեշտ է, որ կատարվի եկեղեցու մեջ, եկեղեցականի կողմից՝ խաչեղբոր և ժողովրդի ներկայությունը: Գաղտնի կատարված պսակն անվավեր է: Պսակը կրկնելի է, երբ ամուսիններից որևէ մեկը մահանում է: Եկեղեցին երկու անգամ է թոյլ տալիս կատարել Պսակի խորհուրդը. «Կանոն կուսի պսակի» և «Կանոն երկրորդ պսակի»: Երրորդ պսակը անթույլատրելի է:

Պսակադրություն արգելված օրերն ավարտվում են եկեղեցական օրերի կանոնով, այսինքն՝ երեկոյան ժամերգու-թյունից հետո: Ուստի պսակն օրհնվում է արգելված օրը երեկոյանապուց հետո, պայմանով, որ հաջորդ օրն իր հերթին արգելված օր չլինի: Պսակի համար արգելված օրերն են.

1. Տարվա բոլոր կիրակի օրերն առանց բացառություն:
2. Յուրաքանչյուր չորեքշաբթի և ուրբաթ օր (բացառությամբ Նոր Կիրակիից մինչև Համբարձում ընկած չորեքշաբթի և ուրբաթ օրերը):

3. Հինգ տաղավար տոների մեռելոցի օրերը:

4. Ս. Ծննդյան, Անվանակոչության, Տյառնընդառաջի, Ավետման և Համբարձման օրերը:

5. Ամբողջ Մեծ պահքի և զատակական առաջին ութ օրերը:

6. Առաջավորաց, Վարդավառի, Ս. Աստվածածնի, Խաչվերացի, Հիսնակաց և Ս. Ծննդյան շաբաթապահքի հինգ օրերը:

(Անցյալ դարի 80-ական թվականներին, Հայրապետական հրահանգով Հայաստանի տարածքում արգելված օրերին արտնվեց պսակադրության խորհուրդի կատարումը եկեղեցիներում):

Պսակը անլուծելի է պետական կամ մարդկային որևէ իշխանություն կողմից. «Ինչ որ Աստված միացրեց, մարդը թող չբաժանի» (Մատթ. ժԹ 6): Ինչպես որ անհնար է Քրիստոսին Իր Եկեղեցուց բաժանել, այնպես էլ անհնար է մարդուն իր կնոջից բաժանել: Եկեղեցին՝ Ավետարանների մեջ ամուսնություն մասին հատվածները մեկնելով (Մատթ. Ե 32, ժԹ 3-10, Մարկ. ժ 2-12, Ղուկ. ժ 2 18), ընդունում է, որ պսակը լուծվում է միայն շնություն մեղքի պատճառով:

ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հայոց եկեղեցին, օրինավոր պսակն անքակտելի է համարում: Պսակադրություն խորհուրդը կատարող քահանան պսակը լուծելու իրավունք չունի: Պսակը լուծելը կամ ամուսնալուծությունը վերապահված է միայն վերադաս հոգևոր իշխանությունը:

Պսակն անվավեր է, երբ կատարվում է գաղտնի, բռնու-թյամբ կամ պսակվողն արդեն օրինավոր ամուսին ունի:

Մարմնական տկարությունների պատճառով ամուսնալուծում չի կատարվում: Կրոնափոխությունն էլ ամուսնալուծության պատճառ չի ընդունվում, սակայն թույլատրելի է, եթե կրոնակցն օրհնության դրսևորում-

ներ կան:

«Կանա՛յք, Հնազա՛նդ եղեք ձեր մարդկանց, ինչպես որ վայել է ի Տեր: Մարդի՛կ, սիրեցե՛ք ձեր կանանց & մի՛ դառնացրեք նրանց» (Կո-ղոս. Գ 18-19):

ԿԱՐԳ ՀԻՎԱՆԴԱՑ (ՎԵՐՋԻՆ ՕԾՈՒՄ)

Ով մեղանշում է իր Արարչի առջև, նա կընկնի բոլոր ձեռքը (Սիրաք ԼԸ 15):

ԿԱՐԳ ՀԻՎԱՆԴԱՑԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Կարգ հիվանդացն այն սուրբ խորհուրդն է, որը կատարվում է հավատացյալ հիվանդի վրա: Խորհրդակատարման ժամանակ հոգևորականի աղոթքով հիվանդի վրա է իջնում աստվածային շնորհը և բուժում նրա հոգևոր ու մարմնավոր տկարությունները: Այս խորհրդով Եկեղեցին աստվածային շնորհներ է մատակարարում իր հիվանդ հավատացյալների ապաքինման և կազդուրման համար: Փրկարար խորհուրդը կատարվում է ո՛չ միայն Եկեղեցում, այլև տանը՝ նրանց համար, ովքեր անկողնային ծանր (մահամերձ) հիվանդ են:

Եկեղեցին ուսուցանում է, որ մարդուն պատուհասած հիվանդությունը հիմնականում նրա կամա թե ակամա գործած մեղքերի արդյունքն է: Ասում ենք հիմնականում, որովհետև կան նաև ժառանգական հիվանդություններ:

Հիվանդ է այն մարդը, ով հեռացել է Աստծուց և ապրում է քրիստոնյային ոչ վայել անկանոն կյանքով: Եվ որպեսզի առողջանա, ապա պետք է ապաշխարի, խոստովանի իր գործած մեղքերը: Այդ դեպքում Եկեղեցին՝ նրա հոգեվորակա-նը, աղոթում է նրա համար՝ կատարելով Հիվանդաց կարգը: Այսպիսով՝ այս խորհուրդը մերձենում ու նույնանում է

Ապաշխարության խորհրդին:

ԽՈՐՀՐԴԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Քրիստոս Իր քարոզչության շրջանում կատարեց բազմաթիվ բժշկություններ, որոնք նկարագրված են Ավետարաններում: Եստեղը մոտենալով Քրիստոսին մարմնավոր ապաքինում էին ակնկալում նրանից, բայց ահա թե ինչ է Հիսուս պատասխանում նրանց. «Քո մեղքե-րը քեզ ներված են» (Մատթ. Թ 2), կամ՝ «Ըստ ձեր հավատի թող լինի ձեզ» (Մատթ. Թ 29) և այլն: Ուստի հիվանդություններից ապաքինման լավագույն ճանապարհը հավատքն է, սեփական մեղքի գիտակցումը, ապաշխարությունը ու ապավինումը Աստծուն ու Եկեղեցուն: Այս ամենով բնավ չենք ենթադ-րում, թե պետք է արհամարհենք բնական դեղամիջոցները, այլ ընդունելով այս ամենը որպես ապաքինման բնական ճանապարհներ՝ պետք է քաջ հասկանանք, որ վերջնական փրկությունը միայն Աստծուց է: Դրա օրինակը առկա է Ավետարաններում, տե՛ստես կնոջ դրվագում: Տառապելով արյունահոսությամբ՝ նա երկար տարիներ դիմել էր բոլոր հնարավոր դեղամիջոցներին, սակայն իր հիվանդության բուժումը չէր ստացել: Եվ ի վերջո, հուսալքված գիտություն հնարած դեղերից, հավատքի գործությամբ դիմում է Քրիս-տոսին: Հիսուս նրան պատասխանում է. «Քաջալերվի՛ր, դո՛ւստր, քո հավատը քեզ փրկեց»: Եվ նույն ժամին կինը բժշկվեց» (Մատթ. Թ 22, Մարկ. Ե 27-29, 34):

ՎԵՐՋԻՆ ՕԾՈՒՄ

Այս խորհուրդը նախկինում անվանվել է Վերջին Օծում: Հիվանդին յուզով օծելը հայտնի էր դեռևս Հին Ուխտի ժամանակներում, հետագայում այն գործադրեցին նաև առաքյալները. «Եվ նրանք ելան ու քարոզում էին, որպեսզի մարդիկ ապաշխարեն: Եվ բազում դձևեր էին հանում հիվանդների օծում»

էին յուզով ու նրանց բժշկում» (Մարկ. 9: 12-13): Հակոբոս առաքյալը հակիրճ այսպես է բացատրում խորհրդի իմաստը. «Հիվանդ է ձեզնից մեկը, թող կանչի եկեղեցու երեցներին, & նրանք նրա վրա թող աղոթք անեն, թող յուզով օծեն նրան Տիրոջ անունով: Եվ հավատով եղած աղոթքը կփրկի հիվանդին, ու Տերը նրան ոտքի կկանգնեցնի: Եւ եթե մեզք գործած լինի, այդ նրան պիտի ներվի» (Հակոբ. 5: 14-15):

Սկզբնապես մեր Եկեղեցում խորհուրդը այդպես էլ կատարվում էր, սակայն հետագայում Վերջին օծումը դադարեց շատ պարզ պատճառով. քանի որ մարդը չգիտի, թե ինքը որտեղ, երբ և ինչպես կհիվանդանա ու կմահանա: Վերջին օծումը մեր Եկեղեցին միացրեց Առաջին օծմանը՝ Դրոշմին: Երբ մկրտվելիս դրոշմվում են մեր աչքերը, ականջները, քիթը, բերանը, ձեռքերն ու ոտքերը, ապա այս օծումը վերաբերում է հենց Վերջին օծման խորհրդին: Հաստատույսց Առաքելական Սուրբ և Ուղղափառ Եկեղեցում շեշտը դրվեց առավելաբար հավատի և մեղքերը խոստովանելու վրա, քան թե օծման: Ըստ Սարգիս Ծնորհալու՝

«Հիվանդին առողջություն տվող յուզը չէ, այլ Տիրոջ անունը»:

Այս ամենի հիման վրա Եկեղեցին, հոգևորականին առաքելով իր հավատացյալ հոտի անդամներից որևէ մեկի համար հիվանդաց կարգը կատարելու, չի պատվիրում, որպեսզի նա հրաշք գործի, այլ որպեսզի հավատի քննությունամբ, խոստովանությունամբ և քաջալերող հորդորներով մեղքերից արձակում տա: Այսպիսի դերով է հանդես գալիս հոգևորականը հիվանդաց կարգի ժամանակ: Նա իր մխիթարական խոսքով, խոստովանություն կարգի կատարմամբ գործած մեղքերի քննությունն առնելով, բարի խրատով, ի վերջո, Աստծուց առած հրամանով մեղքերից արձակելով և հիվանդին հոգեկան խաղաղություն առաջնորդելով նախադրյալներ է ստեղծում, որպեսզի նա վեր գտնվի մարմնական ցավերից՝ աղոթքի օգնականությամբ հուսա-

լով Աստծու ողորմությունը: Եվ վստահ ենք, որ անկեղծ հավատքը անվարձահատույց չի մնա, ինչպես որ Հիսուս հաճախ պատասխանում էր մարդկանց. «Այն ժամանակ գիպավ նրանց աչքերին ու ասաց. «Ըստ ձեր հավատի թող լինի ձեզ»: Եվ բացվեցին նրանց աչքերը» (Մատթ. 18: 29):

Մարդուն իր այս թույլ և տկար հոգեվիճակից բարձրացնելու համար հոգևորականը նախ հիվանդին զղջման է առաջնորդում, որպեսզի վերջինս հրաժարվի այն մեղքերից, որոնք Աստծուց բաժանման առիթ են հանդիսացել: Երկրորդ՝ ավետարանական օրինակներով հիվանդի մեջ թարմացնում է առ Աստված հավատքի, հույսի և սիրո զգացումները: Երրորդ՝ աղոթքով խնդրում է Աստծուց հիվանդի համար ապաքինում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Կարգ հիվանդացի առնչությամբ յուրաքանչյուր քրիստոնյա պետք է հիշի հետևյալ կարևոր հանգամանքները.

1. Հիվանդ է ձեզնից մեկը, թող կանչի Եկեղեցու երեցներին, և նրանք նրա վրա թող աղոթք անեն (Հակոբ. 5: 14):
2. Եկեղեցու այս խորհուրդը միայն մահամերձ հիվանդի վրա չէ, որ կատարվում է, այլ յուրաքանչյուր քրիստոնյայի, որն իր մարմնական տառապանքի, հիվանդության մեջ հոգևոր բժշկությունամբ նաև մարմնական ապաքինում է ակնկալում:
3. Խորհրդի կատարման հիմքը հիվանդի զղջումն է ու հավատքը:
4. Խորհուրդն իրականանում է քահանայի աղոթքով, Ավետարանական ընթերցվածներով, Ս. Խաչը, Ավետարանը և քահանայական իշխանությունամբ ձեռքը հիվանդի գլխին դնելով:
5. Բժշկարար ուժն աստվածային զորությունն ու կարո-

ղությունն է, բոլոր մյուս պարագաները միջոցներ են այդ
ուժը տեսանելի դարձնելու համար:

Փարատի՛ր ցավերն ու բժշկի՛ր հիվանդությունները
Քո ժողովրդից, Տե՛ր Աստված մեր, & բոլորին կատարյալ առողջություն
չնորհիր Քո ամենահազվ իսաչի նշանով,
որով մարդկային ազգի տկարությունը վերցրիր & դատապարտեցիր
մեր կյանքի ու փրկության թշնամուն:



ՆԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՅԻ
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ

ՄԱՅԻ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՄՆԻ ՏՊԱՐԱՆ